*Հավելված 2*

*Հաստատված է*
*Տնօրինության 30.01.2024թ.-ի*
*Թիվ DEC 12-7 արձանագրությամբ*
*Ուժի մեջ է մտնում 30.01.2024 թ.-ից*

<table>
<tr><th colspan="2">ԵՐԱՇԽԻՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ</th></tr>
<tr><td>Երաշխիքի արժույթ</td><td>ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ</td></tr>
<tr><td rowspan="2">Երաշխիքի տրամադրման վճար</td><td>1. Դրամական միջոցների գրավադրմամբ՝<br><br>Մինչև 90 օր — 0.3% միանվագ*<br>91-180 օր — 0.6% միանվագ*<br>181-365 օր — 1% միանվագ*<br>366 օր և ավել — 1% տարեկան*<br><br>*նվազագույնը 20,000</td></tr>
<tr><td>2. Այլ միջոցների գրավադրմամբ՝<br><br>Մինչև 180 օր — 2% միանվագ<br>181-365 օր — 3 % միանվագ<br>366 և ավել — 3% տարեկան</td></tr>
<tr><td rowspan="2">Ապահովման միջոց/Գրավի առարկա</td><td>• Դրամական միջոցներ<br>• Անշարժ գույք<br>• Ավտոմեքենա<br>• Երաշխավորություն*</td></tr>
<tr><td>* մինչև 5.000.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով երաշխիքների դեպքում առնվազն 2 ֆիզիկական անձանց (18-65 տարեկան) կամ իրավաբանական անձանց երաշխավորություններ, ովքեր չունեն գործող ժամկետանց պարտավորություններ:<br>• Երաշխավորներից յուրաքանչյուրի վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:<br>• Երաշխավորներից առնվազն մեկը պետք է հանդիսանա անշարժ գույքի սեփականատեր կամ ապահովված լինի գրանցված աշխատավարձով:</td></tr>
<tr><td rowspan="2">Երաշխիքի գումար/գրավի արժեք հարաբերակցությունը</td><td>Գրավի գնահատված արժեքի առավելագույնը 70%-ի չափով</td></tr>
<tr><td>Դրամական միջոցների գրավադրման դեպքում՝<br>• եթե երաշխիքի գումարը և գրավադրվող դրամական միջոցները տարբեր արժույթներով է՝ առավելագույնը 85%-ի չափով,<br>• եթե նույն արժույթով է՝ առավելագույնը 100%-ի չափով,</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | • Անշարժ գույք և/կամ տրանսպորտային միջոց**,<br>• Վարկային Կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ:<br><br>**Ավտոտրանսպորտային միջոց, որի արտադրման տարեթիվը գրավադրման պահին չպետք է լինի ավելի հին, քան՝<br>• ռուսական արտադրության ավտոմեքենաների համար՝ 5 տարի,<br>• այլ երկրների արտարդրության ավտոմեքենաների համար՝ 10 տարի: |
| **Երաշխիքի ժամկետ** | **Մինչև 36 ամիս** |
| **Երաշխիքի պայմանների փոփոխություն** | **25,000 ՀՀ դրամ**<br>*Ժամկետի երկարաձգման կամ գումարի ավելացման դեպքում լրացուցիչ կգանձվի ավելացված ժամանակահատվածի/գումարի նկատմամբ հաշվարկված համապատասխան տրամադրման միջնորդավճար* |
| **Հաճախորդի հրահանգով երաշխիքի դադարեցում** | **25,000 ՀՀ դրամ** |
| **Վճարում պահանջի դիմաց** | **0.15%,** նվազագույնը 50,000 ՀՀ դրամ |
| **Երաշխիքի հաստատում երրորդ բանկի կողմից** | Ըստ պահանջի |

## Ծանոթություն

1. Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունները և դրանց վճարներն են.

1.1. Անշարժ գույքի գրավադրման դեպքում.

- Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10,000-22,000 ՀՀ դրամ,
- Գրավի պետական գրանցման վճար՝ 26,000 ՀՀ դրամ,
- Նոտարական վավերացման վճար՝ 16,000-20,000 ՀՀ դրամ:
- Գույքի գնահատման վճար՝ 15,000-25,000 ՀՀ դրամ:

2. Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:
3. Այն դեպքում, երբ որպես գրավի առարկա առկա է նաև ավտոմեքենա, ապա Երաշխիքը տրամադրվում է Ավտոմեքենայի պարտադիր «Կասկո» (ֆիզիկական վնաս և առևանգում) ապահովագրությամբ՝ առնվազն երաշխիքի գումարի չափով, յուրաքանչյուր տարի, Երաշխիքի գործողության ողջ ընթացքում: Ընդ որում շահառու պետք է հանդիսանա Կազմակերպությունը:
4. Երաշխիքի դիմաց հաշվարկված սպասարկման վճարները գանձվում են ՀՀ դրամով՝ անկախ արժույթից:
5. Արտարժույթով երաշխիքների տոկոսների գանձման հիմք է հանդիսանում ՀՀ ԿԲ կողմից սահմանված տվյալ օրվա հաշվարկային փոխարժեքը:

6. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև Կազմակերպության հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների և անկախ գնահատողների ցանկը սահմանվում են առանձին Հավելվածներով:
7. Երաշխիքը տրամադրվում է Կազմակերպության *«Շրջանային», «Ավան», «Դավթաշեն», «Մովսես Խորենացի», «Սեբաստիա», «Կոմիտաս», «Բաղրամյան», «Թումանյան», «Հին Նորք», «Էրեբունի», «Հարավ-Արևմտյան», «Շենգավիթ», «Ալեք Մանուկյան», «Արմավիր», «Արփաշատ», «Մասիս», «Գորիս», «Գյումրի», «Վանաձոր», «Աբովյան», «Հրազդան», «Էջմիածին», «Մարտունի», «Սևան», «Գավառ», «Աշտարակ», «Իջևան», «Վեդի», «Արթիկ», «Եղեգնաձոր», «Կապան»* մասնաճյուղերում:
8. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանվում է առանձին Հավելվածով (Հավելված 2 APD#02 (FC1050PRC#08)):
9. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո երաշխիքի հայտի վերաբերյալ որոշման կայացում, Պրինցիպալին տեղեկացում մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:
10. Երաշխիքի տրամադրում՝ պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:
11. Ոչ ֆինանսական ծառայությունների սակագները, այդ թվում քաղվածքների, պայմանագրերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները հրապարակված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.fastbank.am, ինչպես նաև տեղադրված են Կազմակերպության գործունեության վայրերում:
12. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԵՐԱՇԽԻՔԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:
13. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:
14. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ: